ՏԱՐՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԵՍՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(1) **1. Ստորև տրված կրկնավոր բարդություններից ո՞րն է սխալ ձևով ներկայացված.**

ա) առոք-փառոք,

բ) երկրե-երկիր,

գ) մերթընդմերթ,

դ) քայլ առ քայլ:

(1) **2. Ո՞ր նախադասության մեջ է գործիական հոլովով արտահայտված բառը որպես որոշիչ կիրառվել:**

ա) Այդ թագավորի օրոք երկրում բազմաթիվ բարեփոխումներ եղան:

բ) Առաքելը տքնաջան աշխատանքով կարգավորեց իր փոքրիկ տնտեսությունը:

գ) Բացատով անցնելիս նկատեցինք ցամաքած աղբյուրի ակունքը:

դ) Հյուրերն ախորժակով ճաշակեցին տատիկի եփած բրնձով փլավը:

(1) **3. Ո՞ր նախադասության մեջ է սխալ թույլ տրված:**

ա) Ամառվա տապից շիկացած խոտի դեզի մեջ տաքություն էր զգացվում:

բ) Բաց պատուհանից քամու հետ մեզ էր հասնում հեռացող սայլերի ձայնը:

գ) Զանգերի ղողանջը Գրիգոր պապի հոգում անցած հուշեր արթնացրեց:

դ) Հաստատության ղեկավարը հանգամանորեն ծանոթացավ դիմումի հետ:

(6) **4. Ստորև տրված նախադասությունների մեջ մի քանի ձևաբանական և շարահյուսական սխալ կա: Դո՛ւրս գրեք սխալները, բերե՛ք ճիշտ տարբերակները և բացատրե՛ք, թե ինչ պիտի իմանանք, որպեսզի նման սխալներ թույլ չտանք:**

Նկատի՛ ունեցեք, որ ճիշտ գրվածը սխալ տարբերակով փոխարինելու դեպքում Ձեր միավորները կնվազեն:

Ձմեռային պարզկա օրը պսպղուն պսակով էր զարդարել դպրոցի բակի ծառերին: Աշակերտների մեծամասնությունը հավաքվել էին դպրոցի բակում: Նրանք անհամբեր սպասում էին իրենց դպրոցի շրջանավարտ գիտնական Լևոն Ասոյանին: Նրան՝ որպես լավագույն շրջանավարտ, անակնկալ էին ուզում մատուցել: Երեխաներից մեկն Ասոյանին փոխանցեց ծեր ուսուցչի պայուսակն ու ձեռնափայտը: Նա վերցրեց իրերն ու վազելով բարձրացավ երրորդ հարկ: Ուսուցչանոցի դռան մոտ կանգնած էր ուսուցիչը: Նա զարմացած էր, որ գյուղ հասած իր երբեմնի աշակերտը չէր այցելել նրան:

(2) **5. Գտե՛ք տրված նախադասության մեջ թույլ տրված սխալը և բացատրե՛ք, թե ինչ պիտի իմանա ուսուցիչը, որպեսզի նման սխալ թույլ չտա:**

«Զարթոնք» անունն էր կրում նրանց հիմնած ամառային ճամբարը Վրաստանում, որը գտնվում էր Սաղամո լճի ափին:

6. Կարդացե՛ք Լինդա Մալալի Հանթի «Ձուկը ծառի վրա» պատմվածքից բերված հատվածը և կատարե՛ք 6.1. – 6.4. առաջադրանքները:

***

- Հապա, ուշադրությո՛ւն, ֆանտաստիկներ, զբաղեցրե՛ք ձեր տեղերը, - դիմում է մեզ մեր նոր ուսուցիչը՝ միստր Դենիելսը, - ես շատ եմ սիրում կարդալ և ձեզ իմ սիրած մի քանի գրքերի մասին կպատմեմ:

Մեծ հաճույքով լսում եմ նրան, բայց եթե ինձ ասի՝ գիրք կարդա, նույնը կլինի, ինչ խաչափառին ասեն՝ թենիս խաղա:

- Ձեզ համար փոքրիկ անակնկալ եմ պատրաստել. բոլորիդ նոթատետրեր կբաժանեմ: Այն ձեր օրագիրը կլինի, որտեղ ամեն օր գրառումներ կանեք:

Օ՜, ոչ, միայն թե ոչ դա...

- Ժամանակ առ ժամանակ տարբեր թեմաներով հանձնարարություններ կտամ, իսկ ձեր գրածները չեմ ուղղի, երբե՛ք:

Ի՞նչ:

- Այնպես որ գնահատականներ չեմ նշանակի: Կարող եք ձեր մասին գրել, սպորտի մասին, որևէ երկրի, գրքի, ցանկացած բանի մասին գրել:

Չի՞ ուղղի: Ցանկացած թեմայո՞վ: Ականջներիս չեմ հավատում:

- Միայն մի քանի կանոն կա:

Ա՜հ, իհարկե, կանոններ:

- Անպայման ինչ-որ բան պիտի գրեք: Ես հաճախ մեկ-երկու նախադասությամբ ձեզ կպատասխանեմ:

Ինձ դեղին նոթատետր հասավ, իմ սիրած գույնը:

- Այժմ բացեք նոթատետրերը և կատարեք առաջին գրառումը: Փորձեք ինքներդ ձեզ բնութագրել, կարևոր չէ՝ ինչպես կանեք դա:

Ես նկարում եմ մեծ եռաչափ խորանարդ, որը սև եմ ներկում: Նա ասաց՝ արեք, ինչ ուզում եք: Հաջորդ օրը միստր Դենիելսի ձեռքին իմ օրագիրն է:

- Խոստացել եմ և որևէ բան ուղղելու մտադրություն չունեմ: Ինձ մի բան է հետաքրքրում, Էլլի, եթե դեմ չես, բացատրիր մեզ՝ ինչո՞ւ ես սև խորանարդ նկարել: Սև գույնը հավանո՞ւմ ես, թե այլ բան էիր ուզում ասել: Ցանկացած պատասխան ընդունելի է:

- Մութ սենյակ է:

- Ա՜հ... Եվ ինչո՞ւ ես մութ սենյակ նկարել:

- Չէ՞ որ մեր մասին պիտի լիներ այն...

- Այո, բայց մութ սենյակը քեզ հետ ի՞նչ կապ ունի, Էլլի: - Խաղաղ, հաճելի ձայն ունի:

- Մութ սենյակում ինձ ոչ ոք չի տեսնի, - կամացուկ ասում եմ ես:

- Լավ, շնորհակալություն անկեղծության համար, Էլլի:

Սիրտս տեղն ընկավ: Զայրացած չէ:

- Էլլի, – շարունակում է հանկարծ, – կարո՞ղ ես ասել՝ ինչու ես ուզում, որ քեզ չտեսնեն:

- Կարծում եմ՝ ավելի հեշտ կլինի, եթե անտեսանելի լինեմ:

- Ինչո՞ւ:

Ուսերս եմ թափ տալիս: Ուզում եմ պատասխանել, բայց ասելիքս շատ-շատ է, ու բառերը չեն հերիքում:

- Լավ, ուրախ եմ, որ անտեսանելի չես, Էլլի: Այս դասարանն առանց քեզ միանգամայն այլ կլիներ:

Նայում ու հասկանում եմ, որ մինչև հիմա ուսուցչի աչքերի մեջ չեմ նայել, հայացքս վեր չեմ բարձրացրել նրա փորից, մինչև կբացատրեին ինձ իմ սխալը:

Ծանոթացե՛ք 6.1. – 6.2. առաջադրանքների պայմաններին և յուրաքանչյուր հարցի հնարավոր պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ ըստ բերված տեքստի:

(1) **6.1. Ստորև թվարկվածներից ո՞րն է սխալ:**

Միստր Դենիելսը աշակերտներին **«ֆանտաստիկներ»** է անվանում, որովհետև.

ա) համոզված է, որ այսպես դիմելով երեխաներին կօգնի զգալ սեփական անձի և իրենցից յուրաքանչյուրի կարևորությունը,

բ) համոզված է, որ բոլոր երեխաները ստեղծագործական ունակություն ունեն և ֆանտաստիկ են,

գ) ուզում է երեխաների մոտ առաջացնել այն բանի զգացում, որ իրենցից յուրաքանչյուրն անկրկնելի է,

դ) ուզում է, որ երեխաները սեփական անձի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորեն:

(1) **6.2. Էլլին իր անձը բնութագրելու համար եռաչափ խորանարդ է նկարում.**

ա) որովհետև նա դժվարանում է գրել: Սևը նրա սիրած գույնն է, և սեփական անձը բնութագրելու համար նա այդ ճանապարհն է ընտրում,

բ) որովհետև սոցիալականացման խնդիրներ ունի. սև խորանարդն արտահայտում է արտաքին աշխարհից պաշտպանված լինելու նրա ցանկությունը,

գ) որպեսզի այս նկարով ցույց տա, որ անպայման կուղղի ուսուցիչների մատնանշած սխալները,

դ) որպեսզի արտահայտի իր բացասական վերաբերմունքը գրավոր առաջադրանքների նկատմամբ:

Ուշադիր կարդացեք 6.3. – 6.4. առաջադրանքների պայմանները: Հստակ, պարզ ու հիմնավորված ներկայացրե՛ք Ձեր կարծիքը:
Դատողությունը գրական լեզվի տեսակետից և տրամաբանորեն ճիշտ պետք է ձևակերպված լինի:

(2) 6.3. Բառերը չեն հերիքում Էլլին՝ միստր Դենիելսի վերջին հարցին պատասխանելու համար, թեև **ասելիքը շատ-շատ է**... Դատողությո՛ւն արեք՝ ի՞նչ կարող է լինել Էլլիի ասելիքը:

(2) 6.4. **«Այս դասարանն առանց քեզ միանգամայն այլ կլիներ»:** Դատողությո՛ւն արեք՝ ի՞նչ նկատի ունի միստր Դենիելսն այս նախադասությամբ, և ընդհանրապես ինչո՞վ է աչքի ընկնում նրա մանկավարժական դիրքորոշումը:

7. Կարդացե՛ք Պարույր Սևակի «Հանդգնեմ ասել» բանաստեղծությունը և կատարե՛ք 7.1. – 7.2. առաջադրանքները.

Կարող եմ կյանքում ես շա՛տ բան անել,
Բայց անկարող եմ ինձանից վանել
Իմ երկվորյակին՝
Անկեղծությո՛ւնը:

Ուրեմն ասեմ ամենից առաջ,
Հանդգնե՛մ ասել, որ ես աշխարհում
Անխտրական եմ նվագի նման,
Անձրևի նման՝ հավասարատես,
Բայց և կան բաներ,
Բայց և կան մարդիկ,
Որոնց նկատմամբ միտումնավոր եմ
Չորը ճարակող չար կրակի պես,
Եվ ծխի նման անտարբեր եմ ես
Նրանց ճարճատում-ճիչերի հանդեպ...

(2) **7.1. Դիտարկե՛ք բերված համեմատությունները. «<u>անխտրական եմ նվագի նման</u>», «<u>անձրևի նման՝ հավասարատես</u>», «<u>ծխի նման անտարբեր</u>»: Ընտրե՛ք դրանցից մեկը, բացատրե՛ք և դատողությո՛ւն արեք՝ գեղարվեստական ինչպիսի՞ գործառույթ ունի այն բանաստեղծության մեջ:**

(2) **7.2. Դատողությո՛ւն արեք բանաստեղծի գլխավոր ասելիքի շուրջ, ընդհանրացրե՛ք բանաստեղծության մեջ վերհանված խնդիրը:**

Փաստարկված էսսե

<u>Ուշադիր ծանոթացեք առաջադրանքում տրված իրար հակասող երկու դրույթներին, ընտրեք դրանցից մեկը: Ձեր ընտրությունը հիմնավորելու համար բերեք փաստարկներ և քննադատաբար գնահատեք երկրորդ դրույթը:</u>

ա) Ժամանակակից դպրոցը պետք է հատուկ ուշադրություն դարձնի աշակերտի ստեղծագործական կարողությունների զարգացմանը՝ նրան ցանկացած իրավիճակում այլընտրանքային մոտեցմամբ գործող, ինքնատիպ մտածելակերպով քաղաքացի դարձնելու համար:

բ) Ստեղծագործականությունն անտարակույս անհատական հատկանիշ է, ուստի դպրոցը չի կարող աշակերտի մոտ զարգացնել այդ կարողությունը: Դպրոցական կրթության նպատակը բարոյական բարձր արժեքներով օրինապահ քաղաքացիներ դաստիարակելը պետք է լինի: